իրստին քննել, և ոմանք եւս զանյօդելի բանս կարկատէ-
ին, մանաւանդ յաւուրց անտի նորոգութեան Ս. Հրեշ-
տակապետի վանաց. և 'ի չանսալ միաբանաց անտի պատ-
ճառանաց նոցին, ամբաստան լինէին առ դատաւորս եւ
առ իշխանաւորս, եւ մատնէին զնոսա 'ի տուգանս. թէ-
պէտեւ միաբանք ցուցանէին նոցա զվաւերական գրեանս,
զի նոքօք արարեալ էին զամենայն ինչ. այլ 'ի զուր, զի
ոչ միայն անլսող լինէին բանից նոցին, այլ և անարգէին
իսկ, թէ ոչ են նորոգեալ 'ի նոր Արքայէ։ Տեսեալ Թէո-
դորոսի թէ չէ հնար յագեցուցանել զնոսա եւ զերծանիլ
'ի բռնութեանց եւ 'ի նեղութեանց նոցին, բողոք կալաւ
'ի Դուռն՝ յայտ արարեալ զտառապանս իւր և իւրոցն 'ի
պատճառս նորոգութեանց վանօրէից և կալուածոց. եւ
խնդրեաց հրովարտակ՝ ըստ մտաց առաջին հրովարտակաց,
յորս բացայայտ ծանուցեալ են վանօրայք եւ կալուածք
մինչ յեզիպտոս։ Բնեցան արձանագրութիւնք դիվանին
և տուաւ հրովարտակ, սանձել զստահակութիւնս այլազ-
գեաց, զի հակառակ է օրինաց և Կայսերական հրամանին,
١١٧٣ (1760)։

Փոխանորդն Յովհաննէս եպիսկոպոս և թարգմանն Մար-
տիրոս՝ առին հրաման յՕսման Փաշա Կուսակալէն Դամաս-
կոսի և նորոգեցին զվանս Ս. Ծննդեան և յատակեցին սա-
լիս զեկեղեցին Ս. Լուսաւորչի՝ 'ի Ս. Յարութիւն, եւ
զտանիս նորա յատակեցին քարամբք։

Չկնի այնքան դժուութեանց եւ խռովութեանց, որք
ծագեցան յերեսաց Յունաց, 'ի պատճառս Ս. Տեղեաց,
անկան վանօրայք քրիստոնէից դառն յաղքատութիւն եւ
մատնեցան 'ի տառապանս այլազգեաց, որպէս է տեսանել
'ի նամակին՝ զոր գրեաց ցաւօք սրտի Թէոդորոս Պատրի-
արք առ ազգային Կոստանդինուպօլսոյ, ուր յետ այլոց
բանից ասէ. «Արդ՝ լուեալ իսկ է ձեր թէ՝ զի՞նչ եհան
'ի գլուխս երից վանաց յանցելումն ամի կուսակալն Դա-
մասկոսի 'ի գալստեան իւրում աստ, թէպէտ և մեք ծա-
նուցաք ձեզ զամենայնն, այլ հարկադրեցիք զմեզ լռել»։
Իսկ նորս այս լուեալ զգործս նախորդին իւրոյ՝ 'ի ձեռն
քսու արանց, և ակնարկեալ 'ի տումար նորին, ծանեաւ
զոր ինչ գործեալ էր նորա։ Եւ 'ի գալստեան իւրում յե-